ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն **23.11.2015**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Ծրագրի անվանումը:

Վարկի համարը: P148836

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ TEX-04

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությունը դիմել է Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից (ՎԶՄԲ) ստացել է վարկ և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ վերակառուցվող շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն համար:

Առաջադրանքի նպատակը. ՀՏԶՀ վարկային ծրագրի ֆինանսավորման շրջանակներում Հայաստանի տարբեր մարզերի քաղաքային և գյուղական բնակավայրերում նախատեսվում է իրականացնել մի շարք սոցիալական ենթակառուցվածքների վերականգնման ծրագրեր: Այդ թվում դպրոցների, մանկապարտեզների, համայնքային կենտրոնների, հատուկ դպրոցների, բուժհիմնարկների, թանգարանների, բարեկարգվող տարածքների կառուցման, վերակառուցման և վերոնորոգման ծրագրեր: Սույն հրավերի շրջանակներում խորհրդատուն պետք է իրականացնի՝ **Դդմաշենի գյուղի մանկապարտեզի վերակառուցում, Ծաղկաշենի գյուղի միջնակարգ դպրոցի վերակառուցման, Ալավերդի քաղաքի ըմբշամարտի դպրոցի վերակառուցման, Բագրատաշեն գյուղի թիվ 1 դպրոցի մարզադահլիճի վերակառուցման, Ճամբարակի թիվ 3 մանկապարտեզի վերակառուցման, Սևան քաղաքի «Զարթոնք» մանկապարտեզի վերակառուցման, Լեռմոնտովո համայնքի մանկապարտեզի վերակառուցման և Փարփիի մանկապարտեզի վերակառուցման** համար անհրաժեշտ շենքերի տեխնիկական վիճակի ուսումնասիրություն:

Խորհրդատու կազմակերպության գործունեության հիմնական շրջանակներն են՝

1. Շենքերի և շինությունների համալիր հետազոտություն

2. Հասարակական շենքերի առանձին մասերի հետազոտություն (հիմքեր, ծածկեր, տանիք, կրող կարկաս կամ պատեր և այլն)

3. Շենքերի և շինությունների առանձին կոնստրուկտիվ տարրեր (հեծաններ, ծածկի առանձին սալեր, սյուներ, առանձին պատեր, բացվածքների ուժեղացում և այլն)

4. ՕԿՋ-ների, ջրընդունիչ, ջրբաժան և բաշխիչ կառուցվածքների, այլ ինժեներական կառույցների շին. կոնստրուկցիաներ հետազոտություն

5. Բետոնների ֆիզիկա-մեխանիկական հատկություններ (ամրություն, ցրտակայունություն ջրանթափանցելիություն) հետազոտություն

6. Օդափոխության համակարգերի հետազոտություն

7. Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հետազոտություն

8. Ջրամեկուսացման և ջերմամեկուսացման աշխատանքների որակի ստուգում

9. Էլեկտրամատակարարման համակարգերի և էլեկտրատեխնիկական սարքավորումների հետազոտություն

10. Տարբեր խողովակների և ձևավոր մասերի (պողպատյա, թուջե, ասբոցեմենտե, երկաթբետոնե, պոլիմերային և այլն) որակի ստուգում

11. Մետաղական խողովակների և կոնստրուկտիվ տարրերի եռակցման կարերի ստուգում

12. Յուրաքանչյուր հանձնարարվող ծրագրի առաջադրանքի մշակման և իրականացման ընթացքում համագործակցել Պատվիրատուի մասնագետների հետ և տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ նախատեսվող հետազոտություններին ներկայացվող նորմատիվ պահանջների վերաբերյալ

13. Ապահովել հետազոտական աշխատանքների իրականացումը ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի

14. Պայմանագրի ժամկետի շրջանակներում մասնակցել Պատվիրատուի կամ այլ շահագրգիռ կազմակերպության կողմից հրավիրված խորհրդակցություններին և հանձնաժողովների աշխատանքներին:

15. Կազմակերպել շինհրապարակի այցելությունները ըստ Պատվիրատուի հետ համաձայնեցված ժամանակացույցի

Խորհրդատուի ընտրության չափանիշներն են.

- Ընդհանուր փորձառություն /կազմակերպության ստեղծման տարեթիվը, գործունեության հիմնական ոլորտների համառոտ նկարագրություն և կատարված աշխատանքների ցանկ/
- Նմանատիպ կառույցների՝ դպրոցների, մանկապարտեզների, համայնքային կենտրոնների, հատուկ դպրոցների, բուժհիմնարկների, թանգարանների տեխնիկական վիճակի ուսումնասիրության փորձ:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ “Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում”, հունվար 2011 փոփոխված հուլիս 2014, Խորհրդատուների Ուղեցույցներ, (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011, revised in July 2014)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January 2011, revised in July 2014) 3.7 կետում սահմանված ‘Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն’ ընթացակարգին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՏԶՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Գնումների վարչություն, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ.17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով ստորև ներկայացվող հասցեով , ոչ ուշ քան 2015 թ. դեկտեմբերի 4-ը, ժամը 17:00-ը:

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

Գնումների Վարչություն

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ procurement@armeniasif.am

Հեռ: (+37410) 24 71 42